# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2024 թվականի N 226 - Ն

## ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Համաձայն «Սերմերի և տնկանյութի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել՝

1) սերմերի հավաստագրման կարգը և այդ նպատակով օգտագործվող ձևաթղթերը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) տնկանյութի հավաստագրման ժամկետը, կարգը և այդ նպատակով օգտագործվող ձևաթղթերը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետությունում պարտադիր հավաստագրման ենթակա բույսերի տեսակների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 18-ի «Պարտադիր հավաստագրման ենթակա բույսերի

տեսակների ցանկը հաստատելու մասին» N 1344-Ն և «Սերմերի հավաստագրման կարգը հաստատելու մասին» N 1479-Ն որոշումները:

3. Սույն որոշման N 2 հավելվածն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 1-ի N 1087-Ն որոշման մեջ սույն որոշումից բխող համապատասխան փոփոխությունները (այսուհետ՝ փոփոխություններ) ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը:

4. Սույն որոշման N 3 հավելվածով նախատեսված՝ խաղողի, ծիրանենու, ազնվամորենու վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում, հնդավորների, կորիզավորների, ընկուզավորների, հատապտղատուների վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո 9 ամսվա ընթացքում, ընկուզավորների, չոր մեծարևադարձայինների վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո 1 տարվա ընթացքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

16.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ